ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան " 11 " մայիսի 2011թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 08 / 05L

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից ե), ժգ) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի բ), ը), թ) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ), ը), թ), ժէ) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2011 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2011 թվականի հունիսի 22-ին ժամը 12[00]-ին՝ ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոցի Տիգրան Մեծ դահլիճում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2011 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերի ցուցակը կազմելու օր սահմանել 2011 թվականի մայիսի 16-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահութաբաժինների բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2011 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2011 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
7. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:
8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 7-րդ կետով հաստատված ցուցակում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 5-ի:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բ. Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար Մ.Ուզունյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2010 թվականի գործունեության հաշվետվության հաստատումը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և շահույթի բաշխման հաստատումը:

3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2010 թվականի գործունեության արդյունքներով շահույթաբաժինների վճարման մասին:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Պուշկինի 19) 2011 թվականի հունիսի 22-ին ժամը 12:00-ին ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում՝ Արմենիա Մարիոթ հյուրանոցի Տիգրան Մեծ դահլիճում, հրավիրում է բաժնետերերի 2011 թվականի տարեկան ընդհանուր ժողով:

Սույնով հայտնում ենք, որ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2011 թվականի մայիսի 16-ին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Հայտնում ենք, որ ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am)՝ սկսած 2011 թվականի մայիսի 16-ից մինչև հունիսի 22-ը ներառյալ:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում նաև ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը, որը լրացվում և ներկայացվում կամ ուղղարկվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ՝ ք. Երևան, Պուշկինի 19 հասցեով:

Հարգանքով՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ Աշոտ Օսիպյան

ՑՈՒՑԱԿ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2010 թվականի գործունեություն արդյունքները:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2010 թվականի շահույթի բաշխման առաջարկ: